



Social Security

Ծերության Նպաստներ

www.socialsecurity.gov

Սոցիալական Ապահովության Հետ Կամ Հաստատել

Այցելեցեք Մեր Կայքէջը

Մեր կայքէջը, www.socialsecurity.gov պարունակում է Սոցիալական Ապահովության ծրագրերի լրի տեղեկությունները: Այս կայքէջում նաև կարող եք՝

- Գիմել նպաստների
- Գտնել ձեր տեղական Սոցիալական Ապահովության Գրասենեակի հասցեն
- Ստանալ կարևոր տեղեկություններ՝ ինչպես ձեր *Սոցիալական Ապահովության Հաշուեցույցը (Social Security Statement)* կամ փոխարինել ձեր Medicare քարտը, իսկ
- Գտնել մեր հրատարակությունների օրինակները

Այս ծառայությունների մի մասը միայն Անգլերեն լեզվով են: Հայերեն հրատարակությունները տեսնելու համար այցելեցեք մեր Բազմալեզուական Կեդրոնի էջը www.socialsecurity.gov/multilanguage եւ ընտրեցեք Հայերեն:

Չանգահարեք Մեր 1-800 Թվին

Մեր վեբ կայքը օգտագործելուց բացի դուք կարող եք անվճար զանգահարել **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մեր կողմից բոլոր հեռախոսազանգերը պահվում են գաղտնի: Մենք կարող ենք պատասխանել որոշակի հարցերի ժամը 7-ից մինչև 19-ը՝ երկուշաբթիից մինչև ուրբաթ: Մենք կարող ենք ապահովել քարզմանչի անվճար ծառայություններ՝ հեռախոսով կամ ձեր տեղական գրասենյակում: Մենք նաև տրամադրում ենք տեղեկատվություն տեղեկատվության ավտոմատացված շուրջօրյա հեռախոսային ծառայության միջոցով: (Օգտվելով մեր ավտոմատ պատասխանիչ համակարգից, դուք կարող եք հայտնել մեզ ձեր նոր հասցեն կամ խնդրել Medicare-ի փոխարինող քարտ): Եթե դուք խուլ եք կամ ունեք լսողության դժվարություն, ապա կարող եք զանգահարել մեր TTY հեռախոսահամարով՝ **1-800-325-0778**:

Մենք ուզում ենք նաև երաշխավորել, որպեսզի դուք ստանաք ճշգրիտ եւ քաղաքավարի սպասարկում: Այդ պատճառով որոշակի հեռախոսազանգեր հսկվում են Սոցիալական ապահովության երկրորդ ներկայացուցչի կողմից:

Մեջը ինչ է պարունակում

Սոցիալական ապահովության եւ ձեր կենսաթոշակային պլանները..... 4

Չեր ծերության նպաստները..... 4

Ընտանեկան նպաստները..... 9

Դուք ի՞նչ պետք է իմանաք ծերության նպաստների պահանջնորին բավարարելու դեպքում..... 12

Խոսք Medicare-ի մասին..... 18

Սոցիալական ապահովության եւ ձեր կենսաթոշակային պլանները

Սոցիալական ապահովությունը հանդիսանում է գրեթե յուրաքանչյուր ամերիկյան աշխատողի կենսաթոշակային պլանի մասը: Եթե դուք մտնում եք Սոցիալական ապահովությանը ընդգրկված 96 տոկոս աշխատողների մեջ, ապա դուք պետք է իմանաք, թե ինչպե՞ս է գործում համակարգը եւ, թե դուք, կենսաթոշակի անցնելիս, ի՞նչ պետք է ստանաք Սոցիալական պահովությունից: Մույն գրքույկում բացատրվում է, թե դուք ինչպե՞ս եք համապատասխանում Սոցիալական ապահովության նպաստների պահանջներին, ինչպե՞ս ձեր հատույթը եւ տարիքը կարող են ազդել ձեր նպաստների վրա, ինչի՞ մասին դուք պետք է մտածեք ձեր կենսաթոշակի անցնելու ժամանակը որոշելիս եւ ինչո՞ւ դուք չպետք է հույս դնեք միայն Սոցիալական ապահովության վրա որպես ձեր կենսաթոշակային եկամուտ:

Մույն գրքույկում ներկայացվում է Սոցիալական ապահովության ծերության նպաստների վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը առանց բոլոր հարցերին պատասխանելու մտադրության: Ձեր իրավիճակի վերաբերյալ որոշակի տեղեկատվության համար դուք պետք է խոսեք ձեր Սոցիալական ապահովության ներկայացուցչի հետ:

Ձեր ծերության նպաստները

Գուք ինչպե՞ս եք համապատասխանում ծերության նպաստների պահանջներին

Ձեր աշխատելու եւ սոցիալական ապահովության հարկերը վճարելու ընթացքում դուք ստանում եք «կրեդիտներ» ձեր Սոցիալական ապահովության նպաստների հաշվին:

Ծերության նպաստներ ստանալու համար անհրաժեշտ կրեդիտների քանակը կախված է նրանից, թե դուք ե՞րբ եք ծնվել: Եթե դուք ծնվել եք 1929թ.-ին կամ ավելի ուշ, ապա ձեզ անհրաժեշտ է 40 կրեդիտ (10 տարվա աշխատանքային ստաժ):

Եթե դուք դադարեցնում եք աշխատանքը նախքան նպաստների պահանջներին համապատասխանելու համար բավարար կրեդիտներ ունենալը, ապա կրեդիտները կմնան ձեր Սոցիալական ապահովության հաշվառմանը: Եթե դուք հետագայում վերադառնաք

աշխատանքի, ապա դուք կարող եք ավելացնել լրացուցիչ կրեդիտներ, որպեսզի համապատասխանեք պահանջներին: Ծերության նպաստները չեն կարող վճարվել մինչև չունենք կրեդիտների պահանջվող քանակը:

Որքա՞ն է կազմելու ձեր ծերության նպաստը

Ձեր նպաստի վճարումը կախված է նրանից, թե դուք որքա՞ն եք վաստակել ձեր աշխատանքային գործունեության ընթացքում: Եթե եղել են որոշ տարիներ, երբ դուք չեք աշխատել կամ ունեիք ցածր հասույթ, ապա ձեր նպաստների չափը կարող է ավելի ցածր լինել, քան եթե դուք կայուն աշխատած լինեիք:

Ձեր նպաստի վճարման վրա նաև ազդում է այն տարիքը, երբ դուք որոշեք անցնել կենսաթոշակի: Եթե դուք կենսաթոշակի անցնեք 62 տարեկանում (Սոցիալական ապահովության համար ամենավաղ հավանական տարիքը), ապա ձեր նպաստը կլինի ավելի փոքր, քան եթե դուք հապաղեք կենսաթոշակի անցնելու հարցում: Մրա մասին ավելի մանրամասն նկարագրված է էջ 6-ում եւ 7-ում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. *Ամեն րարի ծննդյան օրվանից մուր երեք ամիս առաջ դուք սրանում եք «Սոցիալական ապահովության քաղվածքը»: Դա կարող է լինել օգրակար գործիք, որը կօգնի անվտանգ ֆինանսական ապագայի ձեր պլանավորմանը: Այն չեզ ներկայացնում է ձեր հասույթի հաշվառումը, րալով զնահարումներ, թե որքա՞ն կկազմեն ձեր Սոցիալական ապահովության նպաստները կենսաթոշակի անցնելու րարքեր րարիքներում: Այն նաև զնահարում է, թե որքա՞ն հաշմանդամության նպաստ կարող էիք սրանալ, եթե սրանայիք ծանր հաշմանդամություն միկնել կենսաթոշակի անցնելը, ինչպես նաև րալիս է ձեր մահվան դեպում Սոցիալական ապահովության կողմից ձեր կնոջը (ամուսնուն) եւ պահանջներին քավարարող ընրանիքի անդամներին րրամադրվելիք կերակրողին կորցնելու կապակցությամբ նպաստների զնահարումները:*

Լրիվ կենսաթոշակային տարիքը

«Լրիվ կենսաթոշակային տարիքը» կազմում է 65 տարեկան այն մարդկանց համար, որոնք ծնվել են մինչև 1938թ.-ը: Սակայն, կյանքի տեւողության երկարացման պատճառով, Սոցիալական ապահովության մասին օրենքը փոփոխվեց, աստիճանաբար ավելացնելով լրիվ կենսաթոշակային տարիքը

մինչև այն կհասնի 67 տարեկանը: Այս փոփոխությունը տարածվում է 1938թ.-ին եւ ավելի ուշ ծնվածների վրա: Ձեր լրիվ կենսաթակային տարիքը հայտնաբերելու նպատակով ստուգե՛ք հետևյալ աղյուսակը:

Սոցիական ապահովության լրիվ նպաստները ստանալու տարիքը	
Ծննդյան քիվը	Լրիվ կենսաթոշակային փարիքը
1937թ. կամ ավելի վաղ	65 տարեկան
1938թ.	65 տարեկան եւ 2 ամսական
1939թ.	65 տարեկան եւ 4 ամսական
1940թ.	65 տարեկան եւ 6 ամսական
1941թ.	65 տարեկան եւ 8 ամսական
1942թ.	65 տարեկան եւ 10 ամսական
1943 – 1954թթ.	66 տարեկան
1955թ.	66 տարեկան եւ 2 ամսական
1956թ.	66 տարեկան եւ 4 ամսական
1957թ.	66 տարեկան եւ 6 ամսական
1958թ.	66 տարեկան եւ 8 ամսական
1959թ.	66 տարեկան եւ 10 ամսական
1960թ. եւ ավել ուշ	67 տարեկան

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Ցանկացած փարվա հունվարի 1-ին ծնվածները պետք է հղում կատարեն նախորդ փարվան:



Վաղաժամ կենսաթոշակի անցնելը

Դուք կարող եք ստանալ ձեր Սոցիալական ապահովության նպաստները դեռեւս 62 տարեկանում, սակայն եթե դուք անցնեք կենսաթոշակի մինչև ձեր լրիվ կենսաթոշակային տարիքի լրանալը, սպա ձեր տարիքի պատճառով ձեր նպաստները **մշտապես** կրճատվելու են: Օրինակ, եթե դուք կենսաթոշակի եք անցնում 62 տարեկանում, սպա ձեր նպաստը մոտ 25 տոկոսով նվազ է, քան այն, եթե դուք սպասեիք լրիվ կենսաթոշակային տարիքին:

Որոշ մարդիկ դադարում են աշխատելուց նախքան 62 տարեկանը: Սակայն, այդ դեպքում առանց հասույթի տարիները

նրանց կենսաթոշակի անցնելու ժամանակ հավանաբար կնշանակեն Սոցիալական ապահովության ավելի փոքր նպաստներ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Երբեմն առողջական պրոբլեմները մարդկանց սրիպում են ավելի վաղ անցնելու կենսաթոշակի: Եթե դուք չեք կարող աշխատել առողջական պրոբլեմների պարճառով, սպա դուք պետք է դիտարկեք Սոցիալական ապահովության հաշմանդամության նպաստի համար դիմելը: Հաշմանդամության նպաստի չափը նույնն է ինչ լրիվ չկրճարված ծերության նպաստին: Եթե դուք սրանում եք Սոցիալական ապահովության հաշմանդամության նպաստ, երբ հասնում եք լրիվ կենսաթոշակային տարիքին, սպա այդ նպաստները կփոխարկվեն ծերության նպաստների: Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարե՛ք մեզ եւ խնդրե՛ք Հաշմանդամության նպաստներ հրապարակման (Հրապարակում քիվ 05-10029-AM) օրինակը:

Կենսաթոշակի ուշացած անցնելը

Դուք կարող եք որոշել շարունակելու աշխատելը՝ նույնիսկ ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը անցնելուց հետո: Այդ դեպքում դուք կարող եք բարձրացնել ձեր ապագա Սոցիալական ապահովության նպաստները երկու ճանապարհով:

Ձեր աշխատած յուրաքանչյուր տարին ձեր Սոցիալական ապահովության հաշվառմանը ավելացնում է հասույթի լրացուցիչ տարի: Կյանքի տեւողության ընթացքում ավելի բարձր հասույթը կենսաթոշակի անցնելիս կարող է նշանակել ավելի բարձր նպաստներ:

Ձեր նպաստը ինքնաբերաբար նաեւ կաճի որոշակի տոկոսով ձեր կողմից լրիվ կենսաթոշակային տարիքին հասնելու պահից մինչեւ ձեր կողմից նպաստներ ստանալը կամ մինչեւ ձեր 70 տարեկան դառնալը: Տոկոսային աճի չափը կախված է ձեր ծննդյան քվից: Օրինակ, եթե դուք ծնվել եք 1943թ.-ին կամ ավելի ուշ, սպա մեր կողմից կավելացվի 8 տոկոս տարեկան՝ ձեր լրիվ կենսաթոշակային տարիքից հետո Սոցիալական ապահովությունում ընդգրկվելու համար ձեր ուշացման յուրաքանչյուր տարվա համար:

ԾԱՆՈՒՑՈՒՄ: Եթե դուք որոշում եք ուշացնելու ձեր կենսաթոշակի անցնելը, սպա 65 **տարեկանում անպայման ընդգրկվեք Medicare-ում:** Որոշ հանգամանքներում բժշկական ապահովագրությունը ավելի է քանկանում, եթե դուք ուշացնում եք դրա համար դիմելը: Medicare-ի մասին այլ տեղեկատվությունը ներկայացված է էջ 18-19-ում:

Կենսաթոշակի անցնելու ժամանակի մասին որոշում կայացնելը

Կենսաթոշակի անցնելու ժամանակի ընտրություն կարելու, սակայն անձնական որոշում է: Անկախ կենսաթոշակի անցնելու ձեր ընտրած տարիքից, ցանկալի է, որպեսզի կապվեք Սոցիալական ապահովության հետ, ճշտելու, թե ո՞ր ամիսն է լավագույնը նպաստների համար դիմելու համար: Որոշ դեպքերում կենսաթոշակի անցնելու ամսվա ձեր ընտրությունը կարող է հանգեցնել ձեր եւ ձեր ընտանիքի համար նպաստների ավելի բարձր վճարումներին:

Կենսաթոշակի անցնելու տարիքը որոշելիս կարելու է հիշել, որ ֆինանսիստ մասնագետները ասում են, որ կենսաթոշակի անցնելուց հետո հանգիստ զգալու համար ձեզ կպահանջվի ձեր նախակենսաթոշակային եկամուտի 70-80 տոկոսը: Քանի որ Սոցիալական ապահովությունը վերականգնում է նախակենսաթոշակային եկամուտի միայն 40 տոկոսը, ուստի կարելու է ունենալ կենսաթոշակներ, խնայողություններ եւ ներդրումներ:

Հնարավոր է, որ ձեզ համար նպաստավոր լինի, որպեսզի ձեր Սոցիալական ապահովության նպաստները սկսվեն հունվարից, նույնիսկ եթե դուք մինչեւ այդ տարվա վերջը չեք նախատեսում կենսաթոշակի անցնել: Կախված ձեր հասույթից եւ ձեր նպաստի գումարից, հնարավոր է, որ դուք կարողանաք ստանալ նպաստներ նույնիսկ աշխատանքը շարունակելու պայմաններում: Գործող կանոնների համաձայն շատ մարդիկ կարող են ստանալ հնարավորինս առավելագույն նպաստները՝ հունվարին մուտքագրված դիմումով:

Նպաստների համար դուք պետք է դիմեք ձեր նպաստները սկսվելու ցանկալի ամսաթվից երեք ամիս առաջ: Եթե դուք լիովին պատրաստ չեք կենսաթոշակի անցնելու համար, բայց մտածում եք դա անել մոտակա ապագայում, սպա միցուցե

ցանկություն ունենաք այցելել Սոցիալական ապահովության կայքէջը՝ www.socialsecurity.gov/retire2-ում տեղակայված կենսաթոշակի անցներու պլանավորման մեր հարմար եւ տեղեկատվային միջոցից օգտվելու նպատակով:

«Լրիվ կենսաթոշակային տարիքից հետո աշխատելը կարող է բարձրացնել ձեր նպաստները»:

Ծերության նպաստներ այրի կանանց եւ այրի տղամարդկանց համար

Այրի կանայք եւ այրի տղամարդիկ կարող են սկսել ստանալ Սոցիալական ապահովության նպաստներ 60 տարեկանում կամ 50 տարեկանում, եթե նրանք հաշմանդամ են: Եվ նրանք կարող են վերցնել կրճատված նպաստ ըստ մի հաշվառման, իսկ հետագայում՝ անցնել լրիվ նպաստի ըստ երկրորդ հաշվառման: Օրինակ, կինը կարող է ստանալ այրի կնոջ կրճատված նպաստ 60 կամ 62 տարեկանում, իսկ հետագայում անցնել իր լրիվ (100 տոկոսանոց) ծերության նպաստին՝ իր լրիվ կենսաթոշակին սցնելու ժամանակ: Կանոնները տարբեր են կախված իրավիճակից, ուստի ձեզ մատչելի լրացուցիչ տարբերակների մասին դուք պետք է խոսեք Սոցիալական ապահովության ներկայացուցչի հետ:

Ընտանեկան նպաստները

Նպաստներ ընտանիքի անդամների համար

Եթե դուք ստանում եք Սոցիալական ապահովության ծերության նպաստներ, ապա ձեր ընտանիքի որոշ անդամներ նույնպես կարող են ստանալ նպաստներ: Նրանց թվում են.

- Կանայք կամ ամուսինները, եթե նրանք 62 տարեկան կամ ավելի մեծ են.
- Կանայք կամ ամուսինները, որոնք 62 տարեկանից երիտասարդ են, եթե նրանք խնամում են իրենց երեխային, որը իրավասու է ձեր հաշվառմամբ եւ 16 տարեկանից փոքր կամ հաշմանդամ է.
- Նախկին կանայք կամ ամուսինները, եթե նրանք 62 տարեկան կամ ավելի մեծ են (տես «Նպաստներ ամուսնալուծված կանանց (ամուսինների) համար» էջ 12-ում).

- Մինչև 18 կամ 19 տարեկան երեխաները, եթե նրանք ցերեկային ուսուցման ուսանողներ են, որոնք դեռևս չեն ավարտել միջնակարգ դպրոցը, ինչպես նաև
- Հաշմանդամ երեխաները, նույնիսկ եթե նրանք 18 տարեկան կամ ավելի մեծ են:

Եթե դուք դառնում եք երեխայի (ներառյալ որդեգրված երեխան) ծնող ձեր նպաստները ստանալուց հետո, հայտնե՞ք մեզ երեխայի մասին, որպեսզի մենք որոշենք երեխայի իրավասությունը նպաստներ ստանալու համար:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. *Երեխաների նպաստները մատչելի են միայն չամուսնացած երեխաների համար: Այնուամենայնիվ, որոշ իրավիճակներում նպաստները վճարվում են չամուսնացած երեխայի, որը ամուսնանում է որևէ մեկի հետ, որը նույնպես իրավասու է որպես հաշմանդամ երեխա:*

Կնոջ (ամուսնու) նպաստներ

Կինը (ամուսինը), որը չի աշխատել կամ ունի ցածր եկամուտ, կարող է իրավասու լինել կենսաթոշակի անցած աշխատողի լրիվ նպաստի կեսի չափով ստանալու համար: Եթե դուք բավարարում եք թե՛ ձեր ծերության նպաստների, թե՛ որպես կին (ամուսին) նպաստներ ստանալու պահանջներին, ապա մենք միշտ սկզբից վճարում ենք ձեր նպաստները: Եթե որպես կին (ամուսին) ձեր նպաստները ավելի բարձր են, քան ձեր ծերության նպաստները, ապա դուք կստանաք նպաստների համակցությունը, որը հավասար է կնոջ (ամուսնու) ավելի բարձր նպաստին:

Եթե դուք հասել եք ձեր կենսաթոշակային լրիվ տարիքին եւ համապատասխանում եք կնոջ (ամուսնու) կամ նախկին կնոջ (ամուսնու) նպաստների պահանջներին, ապա դուք կարող եք ընտրել ստանալ միայն կնոջ (ամուսնու) նպաստները եւ շարունակել կուտակել կրեդիտներ ձեր սեփական հետաձգված ծերության նպաստների համար՝ Սոցիալական ապահովության ձեր սեփական հաշվառմամբ: Այնուհետև դուք կարող եք դիմել նպաստների համար ավելի ուշ ժամկետին եւ ստանալ ամսական նպաստ հետաձգված կենսաթոշակի կրեդիտների հիման վրա:

Եթե ամուսինները ուզում են ստանալ Սոցիալական ապահովության ծերության նպաստներ նախքան լրիվ կենսաթոշակային տարիքին հասնելը, ապա նպաստի գումարը

մշտապես կրճատվում է: Կրճատման չափը կախված է նրանից, թե ե՞րբ է անձը հասնում լրիվ կենսաթոշակային տարիքին:

Օրինակ,

- Եթե լրիվ կենսաթոշակային տարիքը 65 տարեկանն է, ապա կինը (ամուսինը) 62 տարեկանում կարող է ստանալ աշխատողի չկրճատված նպաստի 37,5 տոկոսը.
- Եթե լրիվ կենսաթոշակային տարիքը 66 տարեկանն է, ապա կինը (ամուսինը) 62 տարեկանում կարող է ստանալ աշխատողի չկրճատված նպաստի 35 տոկոսը.
- Եթե լրիվ կենսաթոշակային տարիքը 67 տարեկանն է, ապա կինը (ամուսինը) 62 տարեկանում կարող է ստանալ աշխատողի չկրճատված նպաստի 32,5 տոկոսը:

Նպաստի գումարը բարձրանում է ըստ տարիքի աճի մինչև լրիվ կենսաթոշակային տարիքում առավելագույնը 50 տոկոսը: Եթե լրիվ կենսաթոշակային տարիքը տարբերվում է այստեղ ներկայացվածներից, ապա 62 տարեկանում նպաստի գումարը կնվազի 32,5-ից մինչև 37,5 տոկոսը:

Այնուամենայնիվ, եթե ձեր կինը (ամուսինը) խնամում է երեխայի, որը 16 տարեկանից փոքր է կամ որը ստանում է Սոցիալական ապահովության հաշմանդամության նպաստներ, ապա ձեր կինը (ամուսինը) անկախ տարիքից ստանում է լրիվ նպաստները:

Օրինակ.

Մարի Անը համապատասխանում է 250 դոլար գումարի ծերության կենսաթոշակի պահանջներին, իսկ ամուսնու նպաստը կազմում է 400 դոլար: Իր լրիվ կենսաթոշակային տարիքում նա ստանալու է իր 250 դոլարը, իսկ մենք իր ամուսնու նպաստից կավելացնենք 150 դոլար՝ ընդհանուրը հասցնելով 400 դոլարի: Եթե նա ստանա իր ծերության նպաստը նախքան իր կենսաթոշակային տարիքը, ապա երկու գումարներն էլ կրճատվելու են:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. *Ձեր ներկա կինը (ամուսինը) չի կարող ստանալ կնոջ (ամուսնու) նպաստները մինչև ծերության նպաստի համար ձեր դիմումի մուտքագրելը:*

Առավելագույն ընտանեկան նպաստները

Եթե դուք ունեք երեխաներ, որոնք բավարարում են Սոցիալական ապահովության պահանջներին, ապա յուրաքանչյուրը կստանա մինչև ձեր լրիվ նպաստի կեսը: Սակայն, գոյություն ունի գումարի սահման, որը կարող է վճարվել մեկ ընտանիքի՝ սովորաբար ձեր նպաստի վճարման 150-180 տոկոսը: Եթե ձեր կնոջը (ամուսնուն) եւ երեխաներին հասանելիք ընդհանուր նպաստները ավելին են, քան այս սահմանը, ապա նրանց նպաստները կրճատվելու են: Ձեր նպաստը փոփոխություն չի կրելու:

Նպաստներ ամուսնալուծված կնոջ (ամուսնու) համար

Ձեր ամուսնալուծված կինը (ամուսինը) կարող է ստանալ նպաստներ ձեր Սոցիալական ապահովության հաշվառմամբ, եթե ամուսնությունը տեւել է առնվազն 10 տարի: Ձեր ամուսնալուծված կինը (ամուսինը) պետք է լինի 62 տարեկան կամ ավելի մեծ եւ չամուսնացած:

Նրա կողմից ստացվող նպաստների գումարը ազդեցություն չունի այն նպաստների գումարի վրա, որը ստանում եք դուք կամ ձեր ներկայիս կինը (ամուսինը):

Միեւնույն ժամանակ, եթե դուք եւ ձեր նախկին կինը (ամուսինը) ամուսնալուծվել եք առնվազն երկու տարի առաջ եւ ձեր նախկին կինը (ամուսինը) առնվազն 62 տարեկան է, ապա նա կարող է ստանալ նպաստներ, նույնիսկ եթե դուք կենսաթոշակի չեք անցել:

Դուք ի՞նչ պետք է իմանաք ձերության նպաստների պահանջնորին բավարարելու դեպքում

Դուք ինչպե՞ս եք գրանցվում Սոցիալական ապահովության համար

Ծերության նպաստների համար դուք կարող եք դիմել օնլայն ռեժիմով www.socialsecurity.gov հասցեով կամ կարող եք զանգահարել մեր անվճար հեռախոսահամարով՝ **1-800-772-1213**: Կամ էլ դուք կարող եք հանդիպում նշանակել Սոցիալական ապահովության որեւէ գրասենյակ այցելելու եւ անձամբ դիմելու համար:

Կախված ձեր հանգամանքներից, ձեզ կպահանջվի ստորև նշված փաստաթղթերից մի մասը կամ բոլորը: Սակայն, ամբողջ տեղեկատվությունը չունենալու պատճառով մի՛ հետաձգեք նպաստների համար դիմելը: Եթե դուք չունեք պահանջվող փաստաթուղթը, ապա մենք կօգնեք ձեզ այն ստանալու հարցում:

Պահանջվող տեղեկատվություն.

- Ձեր Սոցիալական ապահովության համարը.
- Ձեր ծննդյան վկայականը.
- Ձեր «W-2» ձեռերը կամ ինքնագրադի հարկային հայտարարագիրը անցյալ տարվա համար.
- Ձեր զինվորական գորացրման մասին փաստաթղթերը, եթե դուք անցել եք զինվորական ծառայություն.
- Ձեր կնոջ (ամուսնու) ծննդյան վկայականը եւ Սոցիալական ապահովության համարը, եթե նա դիմում է նպաստների համար.
- Երեխաների ծննդյան վկայականները եւ Սոցիալական ապահովության համարները, եթե դուք դիմում եք երեխաների նպաստների համար.
- ԱՄՆ քաղաքացիության կամ օրինական բնակվող օտարերկրացու կարգավիճակի ապացույցը, եթե դուք (կամ նպաստի համար դիմող կինը (ամուսինը) կամ երեխան) Միացյալ Նահանգներում չեք ծնվել.
- Ձեր բանկի անվանումը եւ ձեր հաշվի համարը, որպեսզի ձեր նպաստները հնարավոր լինի ուղղակիորեն մուտքագրել ձեր հաշվին:

Ձեզ անհրաժեշտ կլինի ներկայացնել փաստաթղթերի բնօրինակները կամ փաստաթուղթը տված գրասենյակի կողմից վավերացված պատճենները: Դուք կարող եք փոստով ուղարկել կամ բերել դրանք Սոցիալական ապահովության գրասենյակ: Մենք կպատճենահանեք եւ կվերադարձնենք ձեր փաստաթղթերը:

Բողոքարկման իրավունքը

Եթե դուք համաձայն չեք ձեր դիմումի վերաբերյալ կայացրած որոշման հետ, ապա դուք կարող եք բողոքարկել այն:

Մանրամասն տեղեկության համար կարդացեք *Բողոքարկման Ընթացքը* հրատարակությունը (հրատարակման համար

05-10041-AM), որը կարող եք ստանալ Սոցիալական Ապահովությունից:

Դուք իրավունք ունեք Սոցիալական Ապահովության հետ ձեր հարցերը լուծել ներկայացուցիչի՝ օրինակ փաստաբանի միջոցով: Յանելյալ տեղեկություն պարունակվում է *Ներկայացուցիչ Ունենալու Ձեր Իրավունքը* հրատարակությանմեջ (հրատարակման համար 05-10075-AM), որը նույնպես կարող եք ստանալ Սոցիալական Ապահովությունից:

Եթե դուք աշխատում եք եւ միեւնոյն ժամանակ ստանում եք նպաստներ

Դուք կարող եք շարունակել աշխատելը եւ դեռես ստանալ ծերության նպաստները: Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրանալու ամսում (կամ դրանից հետո) ձեր հասույթը չի կրճատելու ձեր Սոցիալական ապահովության նպաստները: Այնուամենայնիվ, ձեր նպաստները կկրճատվեն, եթե ձեր մինչև ձեր կողմից լրիվ կենսաթոշակային տարիքը հասնելու ամիսների համար հասույթը գերազանցի որոշակի սահմանները: (Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը գտնելու համար տես սխեման էջ 6-ում):

Այն գործում է հետևյալ կերպ.

Եթե լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք, ապա տարեկան սահմանը գերազանցող հասույթի յուրաքանչյուր 2 դոլարի համար նպաստներից կրճատվելու է 1 դոլար:

Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը հասնելու տարում ձեր նպաստները կրճատվելու են 1 դոլարով՝ տարեկան հասույթի սահմանը գերազանցող վաստակած յուրաքանչյուր 3 դոլարի համար մինչև ձեր կողմից լրիվ կենսաթոշակային տարիքի լրանալը: Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքի լրանալու պահին դուք կարող եք շարունակել աշխատելը եւ վաստակել որքան կցանկանաք եւ ձեր Սոցիալական ապահովության նպաստը չի կրճատվի:

Եթե տարվա ընթացքում ձեր հասույթը ձեր նախահաշվից ավելի բարձր կամ ցածր է, ապա անմիջապես մեզ տեղյակ պահեք, որպեսզի մենք կարողանանք ճշգրտել ձեր նպաստները:

Եթե դուք ցանկանում եք ստանալ լրացուցիչ տեղեկատվություն այն մասին, թե ինչպե՞ս է հասույթը ազդում ծերության նպաստի վրա, զանգահարե՛ք մեզ եւ խնդրե՛ք

Բնչպե՞ս է Աշխատանքը Ազդում Ձեր Նպաստների
հրատարակությունը (հրատարակման համար 05-10069-AM)
օրինակը, որտեղ ներկայացված են տարեկան եւ ամսական
հասույթի գործող սահմանները:

Հատուկ ամսական կանոնը

Ձեր հասույթի նկատմամբ մեկ տարվա ընթացքում կիրառվում է հատուկ կանոն՝ սովորաբար կենսաթոշակի անցնելու ձեր առաջին տարում: Այդ կանոնի համաձայն դուք կարող եք ստանալ Սոցիալական ապահովության վճարում կենսաթոշակի անցնելու որեւէ **ամսվա համար**՝ անկախ ձեր տարեկան հասույթից: Ձեր հասույթը պետք է լինի ամսական սահմանից ցածր: Եթե դուք ինքնազբաղ եք, ապա նաեւ հաշվի է առնվում ձեր գործարարությանը կատարված աշխատանքը:

Եթե դուք ցանկանում եք ստանալ լրացուցիչ տեղեկատվություն այն մասին, թե ինչպե՞ս է հասույթը ազդում ձեր նպաստի վրա, զանգահարե՛ք մեզ եւ խնդրե՛ք *Բնչպե՞ս է Աշխատանքը Ազդում Ձեր Նպաստների* հրատարակությունը (հրատարակման համար 05-10069-AM) օրինակը, որտեղ ներկայացված են տարեկան եւ ամսական հասույթի գործող սահմանները:

Ձեր նպաստները կարող են հարկման ենթարկվել

Սոցիալական ապահովություն ստացողների մոտ մեկ երրորդը իր նպաստներից պետք է վճարի եկամտահարկեր:

- Եթե դուք ներկայացնում եք դաշնային հարկային հայտարարագիրը որպես «անհատ» եւ ձեր միացյալ եկամուտը* 25.000 դոլարի եւ 34.000 դոլարի միջեւ է, ապա հնարավոր է, որ ձեր Սոցիալական ապահովության նպաստների մինչեւ 50 տոկոսից դուք պետք է վճարեք հարկեր: Եթե ձեր միացյալ եկամուտը կազմում է 34.000 դոլարից ավելի, ապա ձեր Սոցիալական ապահովության նպաստների մինչեւ 85 տոկոսը ենթակա է եկամտահարկի:
- Եթե դուք ներկայացնում եք համատեղ հայտարարագիր, ապա հնարավոր, որ պետք է վճարեք հարկեր ձեր նպաստների 50 տոկոսից, եթե դուք եւ ձեր կինը (ամուսինը) ունեք միացյալ եկամուտ*, որը գտնվում է 32.000 եւ 44.000 դոլարի միջեւ: Եթե ձեր միացյալ եկամուտը* կազմում է 44.000 դոլարից ավելի, ապա ձեր Սոցիալական ապահովության նպաստների մինչեւ 85 տոկոսը ենթակա է եկամտահարկի:

- Եթե դուք ամուսնացած եք եւ ներկայացնում եք առանձին հայտարարագիր, սալա դուք հավանաբար հարկեր եք վճարելու ձեր նպաստներից:

Յուրաքանչյուր տարվա վերջին մեր կողմից ձեր կողարկվի *Social Security Benefit Statement (Սոցիալական ապահովության նպաստների քաղվածքը, Չեմ SSA-1099)*, ցույց տալով ձեր կողմից ստացված նպաստների գումարը: Դուք կարող եք օգտագործել այդ քաղվածքը ձեր դաշնային եկամտահարկի հայտարարագիրը լրացնելիս, որպեսզի պարզեք, թե արդյո՞ք դուք պետք է հարկեր վճարեք ձեր նպաստներից:

Չնայած, որ ձեզանից չի պահանջվում դաշնային հարկերի պահում, դուք կարող եք դա ավելի հեշտ գտնել, քան հաշվարկված եռամսյակային վճարումները:

Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարե՛ք Ներքին եկամուտների ծառայության անվճար հեռախոսահամարով՝ **1-800-829-3676** եւ խնդրե՛ք Հրապարակում 554-ը՝ *Tax Guide for Seniors (Հարկային տեղեկատվություն փարեց ամերիկացիների համար)* եւ Հրապարակում 915-ը՝ *Social Security Benefits And Equivalent Railroad Retirement Benefits (Սոցիալական ապահովության նպաստները եւ երկաթգծի ծերության համարժեք նպաստները)*:

**1040 հարկային հայտարարգրում չեք «միացյալ եկամուտը» հանդիսանում է ճշգրտված համախառն եկամուտը գումարած չհարկվող տոկոսը գումարած չեք Սոցիալական ապահովության նպաստների կեսը:*

Կենսաթոշակներ Սոցիալական ապահովությամբ չընդգրկված աշխատանքներից

Եթե դուք ստանում եք կենսաթոշակ այն աշխատանքից, որտեղ դուք վճարել եք Սոցիալական ապահովության հարկեր, սալա այդ կենսաթոշակը չի ազդելու ձեր Սոցիալական ապահովության նպաստների վրա: Սակայն, եթե դուք ստանում եք կենսաթոշակ մի աշխատքնաից, որը ընդգրկված չէ Սոցիալական ապահովությամբ՝ օրինակ, դաշնային քաղաքացիական ծառայությունը, նահանգային կամ տեղական իշխանության ոլորտի զբաղվածությունը կամ աշխատանքը

արտասահմանում, ապա ձեր Սոցիալական ապահովության նպաստը կարող է կրճատվել:

Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարե՛ք Սոցիալական ապահովությանը, խնդրելով հետեւյալ հրապարակումները. *Government Pension Offset* (Կառավարական կենսաթոշակի փոխհատուցումը)՝ կառավարական աշխատողների համար, որոնք կարող են բավարարել Սոցիալական ապահովության նպաստների պահանջներին ամուսնու կամ կնոջ հասույթի հաշվառմամբ (Հրապարակում թիվ 05-10007) եւ *Windfall Elimination Provision* (Չնախարհված եկամուտի բացառման ապահովումը)՝ այն մարդկանց համար, որոնք աշխատել են այլ երկրում կամ կառավարական աշխատողների համար, որոնք նաեւ բավարարում են իրենց իսկ Սոցիալական ապահովության նպաստների պահանջներին (Հրախարակում թիվ 05-10045):

Միացյալ Նահանգներից հեռանալը

Եթե դուք ԱՄՆ քաղաքացի եք, ապա դուք կարող եք ճանապարհորդել կամ ապրել արտասահմանյան երկրում առանց ազդելու Սոցիալական ապահովության նպաստների պահանջներին ձեր բավարարելու վրա: Այնուամենայնիվ, կան որոշ երկրներ՝ Կամպուչիա, Կուբա, Հյուսիսային Կորեա, Վիետնամ եւ նախկին Խորհրդային Միության շատ հանրապետություններ (բացի Հայաստանից, Էստոնիայից, Լիտվայից եւ Ռուսաստանից), որտեղ մենք չենք կարող ուղարկել Սոցիալական ապահովության վճարումներ:

Եթե դուք աշխատում եք Միացյալ Նահանգներից դուրս, ապա ձեր կողմից նպաստներ ստանալու հարցը որոշելու համար կիրառվում են տարբեր կանոններ:

Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարե՛ք մեզ եւ խնդրե՛ք *Your Payments While You Are Outside The United States* հրապարակման (Ձեր վճարումները Միացյալ Նահանգներից դուրս եղած ժամանակ, Հրապարակում թիվ 05-10137) օրինակը:

Խոսք Medicare-ի մասին

Medicare-ը 65 տարեկան եւ ավելի մեծ մարդկանց համար բժշկական ապահովագրության ծրագիր է: Հաշմանդամները կամ այն մարդիկ, ովքեր ունեն խրոնիկ երիկամային անբավարարություն կամ ունեն երիկամների կողային ամիոտրոֆիկ սկլերոզ (Լու Գ-եհրիզի հիվանդություն) ցանկացած տարիքում կարող են ստանալ Medicare:


Medicare կազմված է չորս մասերից

- Հիվանդանոցի ապահովագրություն (Մաս A), որն օգնում է վճարելու հիվանդանոցի մեծ ստացված խնամքի կամ մասնագիտացված բուժարանում (հիվանդանոցեն դուրս գալուց) ստացված խնամքի, որոշակի տնային խնամքի եւ հանգստյան տան (hospice care) խնամքի ծախսերը .
- Բժշկական ապահովագրություն (Մաս B), որն օգնում է վճարելու բժիշկների ծառայությունների, հիվանդանոցից դուրս ստացված խնամքի, բժշկական այլ ծառայությունների եւ բժշկական պաշարների ծախսերը, որոնք ընդգրկված չեն հիվանդանոցիապահովագրությամբ:
- Medicare առավելության ծրագիրներ (Մաս C) գտնվում է որոշ շրջաններում: Անհատներ որոնք ունեն Մաս A եւ Մաս B կարող են ստանալ իրենց բժշկական լրիվ ծառայությունները Մաս C ընդունող բժշկական կազմակերպություններից:
- Medicare դեղագիրով դեղորայք գնելու ծրագիր (Մաս D), որն օգնում է վճարելու դեղագիրով գնվելիք դեղորայքի ծախսերուն:

Եթե 65 տարեկանը լրանալու պահին դուք արդեն ստանում եք Սոցիալական ապահովության նպաստներ, ապա ինքնաբերաբար սկսվում է ձեր Medicare-ը: Եթե դուք չեք ստանում Սոցիալական ապահովություն, ապա նախքան ձեր 65-րդ տարեդարձը դուք պետք է գրանցվեք Medicare-ի համար, նույնիսկ եթե դուք պատրաստ չեք կենսաթոշակի անցնելու համար: Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարե՛ք մեզ եւ խնդրե՛ք *Medicare* հրապարակումը (Հրապարակում թիվ 05-10043-AM):

Օգնություն ցածր եկամուտով Medicare-ի նպաստառուներին

Եթե դուք ունեք ցածր եկամուտ եւ սակավ միջոցներ, ապա ձեր նահանգը կարող է վճարել Medicare-ի ձեր ապահովագրավճարները, իսկ որոշ դեպքերում, բժշկական «կանխիկ» այլ ծախսերը, ինչպիսին են ֆրանշիզաները եւ համատեղ ապահովագրությունը:



Միայն ձեր նահանգը կարող է որոշել, թե արդյոք դուք բավարարում եք սույն ծրագրով օգնություն ստանալու համար: Եթե դուք կարծում եք, որ բավարարում եք, ապա դիմե՛ք ձեր նահանգային կամ տեղական բժշկական օգնության (Medicaid) գործակալությանը, սոցիալական ծառայություններին կամ սոցիալական ապահովության գրասենյակներին: Դուք կարող եք լրացուցիչ տեղեկատվություն ստանալ այս ծրագրի մասին *If you need help paying Medicare costs, there are programs that can help you save money* (Ծրագիրներ Կան Որոնցից Կարող Եք Ոգտվել Եթե Օգնության Պետք Ունեք Medicare Ծախսերը Վճարելու, Հրապարակում թիվ CMS-10126) հրապարակումից: Դրա օրինակը ստանալու համար զանգահարե՛ք Medicare` **1-800-MEDICARE (1-800-633-4227)** անվճար հեռախոսահամարով: Եթե դուք խուլ եք կամ ունեք լսողության դժվարություն, ապա դուք կարող եք զանգահարել` **1-877-486-2048** TTY հեռախոսահամարով:

«Լրացուցիչ օգնություն» Medicare-ի դեղատոմսով բաց թողնվող դեղերի հետ կապված ծախսերի համար

Եթե դուք ունեք սահմանափակ եկամուտ եւ միջոցներ, ապա դուք կարող եք բավարարել հավելյալ օգնության պահանջներին, որպեսզի վճարեք դեղատոմսով բաց թողնվող դեղերի համար Medicare-ի Մաս D-ով: Սոցիալական ապահովության դերն է օգնելու ձեզ հասկանալ, թե ինչպես դուք կարող եք բավարարել պահանջների եւ օգնել ձեզ հավելյալ օգնության համար դիմումը մշակելու հարցում: Տեսնելու, թե արդյոք դուք բավարարում եք պահանջներին, զանգահարե՛ք Սոցիալական ապահովության անվճար հեռախոսահամարով կամ այցելե՛ք մեր վեբ կայքը:

www.socialsecurity.gov



Social Security Administration
SSA Publication No. 05-10035-AM
Retirement Benefits (Armenian)
January 2008